



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 15/22**

30.10.2022թ.

ք. Երևան

Քաղաքացի Զոյա Մկրտչյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 60-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

Թիվ ԱՐԴ/0070/04/15 սննանկության գործով ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) 02.06.2016 թվականի վճռով Զոյա Վարդանի Մկրտչյանը ՀՀ ֆինանսների նախարարության դիմումի հիման վրա ճանաչվել է սնանկ. նրան սնանկ ճանաչելու հիմքում դրվել է ՀՀ ֆինանսների նախարարության Արմավիրի տարածքային հարկային տեսչության պետի 2015 թվականի հունիսի 09-ի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1142 որոշումը (այսուհետ՝ Որոշում):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.09.2016 թվականի որոշմամբ Դիմողի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.06.2016 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.12.2016 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 30.09.2016 թվականի որոշման դեմ Դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Այսուհետև, թիվ ՎԴ/1238/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 23.09.2021 թվականի վճռով Որոշումը ճանաչվել է անվավեր:

Նշվածը հիմք ընդունելով՝ Դիմողը ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ թիվ ԱԲԴ/0070/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը նոր հանգամանքի առկայության հիմքով վերանայելու վերաբերյալ: Վճռաբեկ բողոքը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի, մասնավորապես՝ այդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիման վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի ապրիլի 20-ի «Դատական ակտի վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշմամբ Ջոյա Մկրտչյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է՝ հիմքում դնելով այն, որ թիվ ՎԴ/1238/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 23-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը թիվ ԱԲԴ/0070/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը վերանայելու նոր հանգամանք չէ:

Ըստ Դիմողի՝ իր նկատմամբ Օրենսգրքի 419-րդ հոդվածը կիրառվել է այնպիսի մեկնաբանությամբ, որը հանգեցրել է վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը մերժելուն:

Դիմողը նշում է, որ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը որպես նոր հանգամանք է նախատեսում վարչական ակտն անվավեր ճանաչելու մասին այն դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, որով այդ վարչական ակտն անվավեր է ճանաչվում ընդունման պահից: Այսինքն՝ այդ իրավադրույթը նոր հանգամանքների շարքից դուրս է թողել այն դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքը, որով վարչական ակտն անվավեր է ճանաչվել ոչ թե ընդունման պահից, այլ այն անվավեր ճանաչելու մասին դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 60-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

Վիճարկվող նորմի՝ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի բովանդակությունը հետևյալն է.

1. Նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

5) բեկանվել է այն դատական ակտը, դատավճիռը, կամ ընդունման պահից անվավեր է ճանաչվել այն վարչական ակտը, որը հիմք է ծառայել տվյալ դատական ակտի կայացման համար.

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Այսպես, Դիմողը վիճարկում է Օրենսգրքի նշված նորմը այն հիմնավորմամբ, որ այդ իրավադրույթը որպես նոր հանգամանք է նախատեսում վարչական ակտն անվավեր

ճանաչելու մասին դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, որով այդ վարչական ակտն անվավեր է ճանաչվում ընդունման պահից և նոր հանգամանքների շարքից դուրս է թողնում օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտը, որով այդ դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելու պահից, ոչ թե ընդունման պահից է անվավեր ճանաչվել այն վարչական ակտը, որը հիմք էր ծառայել այլ գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայացման համար: Դիմողի պնդմամբ՝ թիվ ԱՐԴ/0070/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանը նշված հիմնավորմամբ է կայացրել 20.04.2022 թվականի՝ «Դատական ակտի վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը:

Անդրադառնանք անձի՝ դատական պաշտպանության, ինչպես նաև՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունքների իրացման հարցին:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1–ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ

առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզիտիմ ակնկալիքով:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և արտահայտել հետևյալ դիրքորոշումը.

2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1452 որոշում. «Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածի հիմքում, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական պետություն է:**

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՍԴՈ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն

ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՄԴՈ-1176 որոշմամբ կարևորել է նաև օրենսդրության մեջ կիրառվող հասկացությունների հստակությունը, նշելով, որ «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»:

Վերագրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում»:

Անդրադառնալով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտին՝ ՀՀ Սահմանադրական դատարանը 2008 թվականի սեպտեմբերի 9-ի ՄԴՈ-758 որոշման մեջ արձանագրել է հետևյալ դիրքորոշումը. «12 Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ հարկ է համարում վկայակոչել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 19.01.2000 թ. Նախարարների ներկայացուցիչների 694 նստաշրջանում ընդունված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման և վարույթի նորոգման մասին» N R (2000) 2 հանձնարարականը: Վերջինս, մասնավորապես, ամրագրում է. «Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն նկատի ունենալով, որ Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելուն ուղղված Նախարարների կոմիտեի պրակտիկան ցույց է տալիս, որ որոշակի հանգամանքներում գործերի վերանայումը կամ վարույթի նորոգումը հանդիսանում է ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը *restitutio in integrum*-ի հասնելու համար. 1.

Առաջարկում է Պայմանավորվող պետություններին համոզվել, որ ներպետական մակարդակում գոյություն ունեն համարժեք հնարավորություններ *restitutio in integrum*–ի հասնելու համար...»: Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտի վերանայման առկա իրավակարգավորումն առանձին դեպքերում ոչ միայն հնարավորություն չի տա վերականգնելու անձի խախտված իրավունքը, այլ նաև կխոչընդոտի Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորության լիարժեք կատարմանը: Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ Եվրոպական դատարանի պրակտիկայում հետևողականորեն զարգանում է, այսպես կոչված՝ «ուղենիշ (դեկավար) վճիռների» ինստիտուտը: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ Եվրոպական դատարանը տվյալ պայմանավորվող պետության դեմ ուղղված մի շարք միանման գանգատներից ընտրում է մեկ առավել տիպային օրինակ և ըստ էության քննում և վճիռ է կայացնում միայն այդ գանգատի կապակցությամբ. մնացած գանգատների հեղինակների իրավունքների վերականգնումը կատարվում է ներպետական մակարդակում՝ այդ «ուղենիշ վճռի» հիման վրա: Հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկայում առկա այդ զարգացումները և ելնելով «ուղենիշ վճիռների» հիման վրա ներպետական մակարդակում՝ Եվրոպական դատարանի մասնաճյուղերի իրավունքների վերականգնման հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությունից, ներպետական օրենսդրությունը պետք է այս հանգամանքը նույնպես հստակ ամրագրի»:

Այսպես, նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կարող են վերանայվել առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման, վճարման կարգադրությունները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու, այն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին և վճռաբեկ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումները (Օրենսգրքի 415-րդ հոդված):

Օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը բերվում է նույն օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված հիմքերով: Օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատական ակտի բողոքարկման հիմքերն են՝ նոր երևան

եկած կամ նոր հանգամանքը: Օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում: Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բեկանվել է այն դատական ակտը, դատավճիռը, կամ ընդունման պահից անվավեր է ճանաչվել այն վարչական ակտը, որը հիմք է ծառայել տվյալ դատական ակտի կայացման համար:

Տվյալ դեպքում Դիմողը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.12.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը վերանայելու համար որպես նոր հանգամանք վճռաբեկ բողոքում վկայակոչել է այն, որ թիվ ՎԴ/1238/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 23.09.2021 թվականի օրինական ուժի մեջ մտած վճիռը թիվ ԱԲԴ/0070/04/15 սնանկության գործով հանդիսանում է նոր հանգամանք, քանի որ այդ վճռով անվավեր է ճանաչվել թիվ ԱԲԴ/0070/04/15 սնանկության գործով դատական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած միակ վարչական ակտը՝ ՀՀ ֆինանսների նախարարության 09.06.2015 թվականի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1142 որոշումը:

Սակայն, ուսումնասիրելով վերը նշված դատական գործերով կայացված դատական ակտերը, հանգում ենք այն եզրակացության, որ տվյալ դեպքում առկա չէ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված նոր հանգամանք, քանի որ թիվ ՎԴ/1238/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 23.09.2021 թվականի վճիռը թիվ ԱԲԴ/0070/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.12.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը վերանայելու նոր հանգամանք չէ:

Նախ, պետք է փաստել, որ վճռաբեկ դատարանը գործն ըստ էության քննող դատարան չէ, այն ստուգում է ստորադաս դատարանի կողմից կայացված դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը: Տվյալ դեպքում, թիվ ԱԲԴ/0070/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և

վարչական պալատի 28.12.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման կայացման պահին դեռևս կայացված չի եղել թիվ ՎԴ/1238/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 23.09.2021 թվականի որոշումը, որպիսի պարագայում թիվ ԱԲԴ/0070/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2016 թվականի որոշմամբ վճռաբեկ դատարանը գնահատել է նույն գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.09.2016 թվականի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքի հիմքերն ու հիմնավորումները:

Նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման վարույթի շրջանակներում իրականացվում է օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության պայմաններում խախտված իրավունքի վերականգնման գործառույթ, որն ունի իր ուրույն խնդիրներն ու նպատակները: Այս գործառույթի արդյունավետ իրականացումը կարող է ապահովվել հաշվի առնելով դրա բովանդակությամբ, խնդիրներով ու նպատակներով պայմանավորված առանձնահատկությունները, բացառելով անձի իրավունքները ոտնահարող դատական ակտն ուժի մեջ թողնելու հնարավորությունը:

Դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում:

Նոր հանգամանքների առկայության պարագայում, այսինքն՝ երբ առկա է իրավունքի կիրառման օբյեկտիվ անհրաժեշտություն՝ պայմանավորված տվյալ դեպքում վարչական ակտը անվավեր ճանաչելով, ապա «դատական ակտի վերանայման վարույթի» հարուցումը, դատական ակտը վերանայելու գործընթաց նախաձեռնելն իրավասու դատարանի կողմից իրավաբանական անհրաժեշտություն է, այդ դատարանի

սահմանադրական պարտականությունը, որի նպատակն անձի խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումն է:

Սույն դեպքում, հիմք ընդունելով Օրենսգրքի 416-րդ հոդվածի դրույթները, համաձայն որի՝ «1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը: 2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայում է Վճռաբեկ դատարանը», գտնում ենք, որ թիվ ՎԴ/1238/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 23.09.2021 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա թիվ ԱԲԴ/0070/04/15 սնանկության գործով անհրաժեշտ էր ոչ թե վճռաբեկ բողոք ներկայացնել 28.12.2016 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշման դեմ, այլ պետք է նույն գործով վերաքննիչ բողոք ներկայացվեր 02.06.2016 թվականի վճռի դեմ, որով Դիմողը սնանկ է ճանաչվել:


Այսինքն՝ սույն դիմումի շրջանակներում պետք է խոսել ոչ թե վիճարկվող նորմի սահմանադրականության մասին, այլ՝ թիվ ԱԲԴ/0070/04/15 սնանկության գործով թույլ տրված սխալ ընթացակարգի:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ վճռաբեկ դատարանը 2022 թվականի ապրիլի 20-ի «Դատական ակտի վերանայման վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշմամբ Զոյա Մկրտչյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է՝ հիմքում դնելով այն, որ թիվ ՎԴ/1238/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 23-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը թիվ ԱԲԴ/0070/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը վերանայելու նոր հանգամանք չէ: Այսինքն՝ ՄԴ ներկայացված դիմումի մեջ նշված դիրքորոշումը, որ Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշումը կայացվել է այն հիմնավորմամբ, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթը նոր հանգամանքների շարքից դուրս է թողնում օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտը, որով այդ դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելու պահից, ոչ թե ընդունման պահից է անվավեր ճանաչվել այն վարչական ակտը, որը հիմք էր ծառայել այլ գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայացման համար, չի համապատասխանում իրականությանը. Օրենսգրքի վիճարկվող դրույթը Դիմողի նկատմամբ տվյալ մեկնաբանմամբ չի կիրառվել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 60-րդ, 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

Համակարգող՝

 Recoverable Signature

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169